

53, Նըվըբ՝ Շահնոբէ 1 ժամ, Քօշկայ 1 ժամ
յարևելս, 15 տ. ք. բնակիչ:

54, Շէհիաներ՝ 1 1/2 ժամ Նըվըբէ, Մալխասէ 1
1/2 ժամ հարաւ 12 տ. ք. բնակիչ:

Մերող եղիք, հայ ընթերցողք, որ հազիւ կարողա-
ցայ գիւղերու անուանց մերկ ցանկ մի ներկայացնել ձեր
յարգութեան:

Ինձ ևս շատ հաճելի պիտի լիներ, երբ ըստ ցան-
կութեան իմոյ մանրամասն խուզարկէի այս վիճակն,
բանասիրաց ներկայացնէի զոնէ այս մի դարու մէջ պա-
տահած ընդարձակ պէտքերն, մեծ փոփոխութիւններն,
սրտաճմբիկ անցքերն, որ կատարուած են աստ:

Դարձեալ հառաչանօք կը կրկնեմ, ո՞ր են հայ բա-
նասէրներ, անգին յիշատակներն օր ըստ օրէ անհետա-
նալու վերայ են. Խամուրայ վիճակն ցարդ մէկը մտած
և որոնած չէ թէ ի՞նչ կայ, միթէ չը զիտէք մի տող
հնութիւն անցեալ պատմութեան մէջ ինչ մեծ լոյս կը
սփռէ, միթէ չզիտէք անբան անասուններն անգամ մեր
հնութեանց թշնամի դարձած են:

Արի, հայ ընթերցող, գէթ մի անգամ անցնինք
Ծաղկոտն գաւառի միջէն, գէթ մի անգամ մեր աջ և
ձախ հայինք, մեր ճանապարհորդութիւնը յարևելս
հիւսիս է, աջ կողմերնիս կը բարձրանան Ծաղկանց լեռ-
ներու կողերն, ի ձախ ընդարձակ տափարակ դաշտ մի
Մուրատի և Արածանոյ եռանկիւնոյ միջավայրն՝ մօտ
80 գիւղերով, գէթ մի անգամ ևս մեր շուրջն հայինք,
տեղ տեղ հազիւ նշմարելի կը դառնան մեզ այն գիւ-
ղօրայք, որ շէն են և կերելին սև բծերու պէս, այն
զմայլելի երկնագոյն մարգագետիններու մէջ, շարունա-